Գյուղատնտես

ՆՈՅԵՄԲԵՐ 17-25 2014 Թ. ԹԻՎ 30 (2052)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գործադիրը հաստատել է՝ 2015-2017թթ. Եվրամիության փորձարկման ռեֆերենս մեթոդներով, «Ձկան և մեղրի փորձաքննությունների ծրագիրը»:

Ըստ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի, այս ծրագիրն ու դրա իրականացումը մեր երկրում համարվում է սննդամթերքի անվտանգության պատշաճ համակարգի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված կարևորագույն հիմնասյուներից մեկը, որի առկայությունն ու իրագործումը հնարավորություն կընձեռի, միջազգային պահանջներին համապատասխան, ձկնաբուծություն և մեղվաբուծություն զարգացնելու: Հնարավորություն կտա նաև բացահայտելու ՀՀ-ում արտադրվող և սպառվող ձկան ու մեղրի մեջ մի շարք նյութերի սահմանային թույլատրելի քանակությունները, դրանց գերազանցումները և չթույլատրված նյութերի կիրառումը՝ բարելավելու համար վտանգավոր սննդամթերքի հայտնաբերման ներկա իրավիճակը, ինչն էլ կապահովի տեղական արտադրության անվտանգ սննդամթերքի շուկայահանումը և նախադրյալներ կստեղծի արտահանման ու դրա ծավալների ավելացման համար: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական Միության երկրներ ձուկ և մեղր չի արտահանվում: Եթե մեղրի համար 2013թ. իրականացվել է մնացորդային նյութերի հսկողության ծրագիր, ապա ձկան դեպքում՝ մնացորդային նյութերի պարունակության կամ դրանց քանակական գերազանցման մասին անհրաժեշտ տեղեկատվություն և հիմքեր չկան: ՀՀ սննդամթերքի անվտանգության լիազոր մարմինը կազմել և ԵՄ հանձնաժողովի սննդի անվտանգության գրասենյակ է ներկայացրել ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության ազգային պլանը, որն արժանացել է հավանության: Յուրաքանչյուր տարի ակնկալվում և պահանջվում է՝ մինչև տվյալ տարվա մարտի 31-ը, ԵՄ սննդի անվտանգության գրասենյակ ներկայացնել նախորդ տարվա մնացորդային նյութերի հսկողության ծրագրի իրականացման արդյունքները, երկրի իրավասու մարմնի կողմից ձեռնարկված գործողություններն ու արդյունքները:

2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը Հռոմում նոյեմբերի 19-21-ը մասնակցել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Մնուցման հարցերով երկրորդ միջազգային համաժողովին, որտեղ հանդես է եկել ելույթով:

«Հարգելի՛ պարոն Նախագահող, տիկնայք և պարոնայք, Ողջունում եմ Ձեզ և Մնուցման հարցերին նվիրված Միջազգային համաժողովին: Նախևառաջ, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը, համընդհանուր զարգացման առանցքային հարցերից մեկին՝ Մնուցման խնդրին նվիրված կոնֆերանսին մասնակցելու հրավերի համար: Ուրախ եմ արձանագրել, որ 1992 թվականին տեղի ունեցած Մնուցման հարցերին նվիրված միջազգային կոնֆերանսից հետո բնակչության սննդի ապահովության իրավիճակը ներկայում զգալիորեն բարելավվել է:

Չնայած դրական դինամիկային՝ մենք դեռևս հսկայածավալ աշխատանք ունենք կատարելու՝ սովի և թերսնման, ինչպես նաև մեր մոլորակում ապրող յուրաքանչյուր առանձին ընտանիքի և յուրաքանչյուր անհատի սննդի որակի բարելավման ուղղությամբ: Հասկանալի է, որ ստեղծված իրավիճակը պարզագույններից չէ և պահանջում է համատեղ ջանքեր վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ:

Հայաստանում սննդի անվտանգության հարցերին մեծ կարևորություն է տրվում: Վերջին չորս տարիներին, մեր ջանքերի շնորհիվ, արձանագրվեց գյուղատնտեսական արտադրանքի միջինը՝ 8 տոկոս աճ, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է մոտ 20 տոկոս:

Հայաստանում գյուղատնտեսությամբ զբաղվում են հիմնականում փոքր գյուղացիական տնտեսությունները, որոնք ստեղծվել են հանրապետության անկախացումից հետո՝ սեփականաշնորհման արդյունքում:

2

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՈՐ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքում մասնակցել է անասնաբուժական և գյուղատնտեսական սպասարկման կենտրոնի պաշտոնական բացմանը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ Արուսյակ Ալավերդյանը, ֆերմերներ և հյուրեր: Կենտրոնը հիմնվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին՝ բարելավելու սեփական արոտավայրերից ստացվող արտադրանքը և ստեղծելու անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ համակարգ: «Առաջիկա երկու տարիներին, նմանատիպ կենտրոններ կբացվեն հանրապետության բոլոր մարզերում: Կենտրոնները կօգնեն գյուղացիական տնտեսություններին՝ առկա խնդիրների լուծման գործում: Ֆերմերներին կտրամադրվի նաև խորհրդատվություն՝ իրենց տնտեսությունների գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Անասնաբուժական և գյուղատնտեսական սպասարկման կենտրոնը ՀՀ Արագածոտնի մարզի ֆերմերային տնտեսություններին կառաջարկի ծառայությունների լայն շրջանակ, այդ թվում՝ անասնաբուժական, արհեստական սերմնավորման ծառայություններ, հիվանդությունների կանխարգելում և բուժում, անասնաբուժական դեղորայքի, անասնաբուժական և անասնապահական սարքավորումների և պարագաների վաճառք, խորհրդատվություն և ուսուցողական դասընթացներ: Կենտրոնի տեխնիկական և մասնագիտական կարողությունները թույլ կտան նպաստել տարածաշրջանում մասնագիտական զարգացմանն ու բիզնեսի աջակցմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի իրականացմանը:

Հետագայում՝ ծրագրով նախատեսվում է կառուցել ևս երեք նմանատիպ կենտրոններ, որոնք կծառայեն մասնավոր անասնաբուժական և բիզնեսին աջակցող ծառայությունների զարգացմանը:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի ՆՊԱՍՏ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Երկրի պարենային անվտանգության գերակայությունը, ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ինչպես նաև ծառացած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, գյուղական տարածքների զարգացման առաջնահերթություններն առավել կարևորում են գյուղատնտեսության ոլորտի կայուն զարգացումը:

Արդեն փաստ է Հայաստանի Հանրապետության անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը, որը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտահանման ծավալների ավելացման համար, ինչը կարևոր նախադրյալ է տեղական արտադրության ծավալների աճի, նոր տեխնոլոգիաների ներդրման, ագրոտեխնիկայի կատարելագործման, արտաքին ներդրումների ավելացման ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացման համար: Վերոնշյալ հանգամանքն առավելագույնս գյուղատնտեսության զարգացմանն ի նպաստ օգտագործելու համար, այսօր, ավելի քան երբևէ, անհրաժեշտ է պետության աջակցությունը գյուղացուն:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացված պետական քաղաքականության, ռազմավարական կարևորագույն մի շարք միջոցառումների, քաղաքականությունն իրականացնող մարմինների հետևողական աշխատանքի և տնտեսավարողների ջանքերի արդյունավետ համադրման արդյունքում, վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտում գրանցվել են նկատելի դրական տեղաշարժեր: Ուրախությամբ պետք է նշել, որ բացառություն չէ նաև ընթացիկ տարին. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով, արձանագրված ոլորտի տնտեսական աճը կազմել է 6.9 %:

Սակայն, դա դեռ չի նշանակում, որ բոլոր խնդիրները լուծված են, ավելին՝ տարեցտարի մենք բախվում ենք նոր մարտահրավերների, որոնց լուծման համար պահանջվում են՝ իրավիճակից բխող, առավել արդյունավետ մոտեցումներ ու նորարարական լուծումներ:

Դեռևս մտահոգիչ է գյուղատնտեսական հողատեսքերի՝ հատկապես վարելահողերի, նպատակային և արդյունավետ օգտագործման վիճակը: Մասնավորապես, կուզենայի նշել, որ գյուղատնտեսական արտադրության մեջ արդյունավետ տնտեսավարմանը դեռևս շարունակում են խոչընդոտել գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը: Ստեղծված իրավիճակում, չնայած որոշ դրական քայլերին, դանդաղ են ընթանում տնտեսությունների խոշորացման, կոոպերացման, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեության խթանման գործընթացները:

3

1 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ծրագրի իրագործումից ակնկալվում է, որ կստեղծվի ձկան և մեղրի անվտանգ արտադրության և պետական հսկողության ապահովման միջազգային ընդունելի գործելակերպ, որը ոչ միայն կապահովի, այլև կնպաստի տեղական սպառողների առողջության պահպանմանը սննդային վնասակար և վտանգավոր գործոններից:Մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության նպատակով, կատարվող անհրաժեշտ լաբորատոր փորձաքննությունները կատարվել են 2013թ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի լաբորատոր ծառայությունների կենտրոնի» կողմից: Իսկ ձկան մեջ մնացորդային նյութերի հայտնաբերման կանոնակարգված և միջազգային պահանջներին համապատասխանող մեթոդներով ու ծավալով հետազոտություններ չեն իրականացվել՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Ներկայումս սննդամթերքի, այդ թվում՝ ձկան և մեղրի մեջ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված սննդամթերքի անվտանգության ցուցանիշների (որոնք, ի դեպ, ամբողջությամբ չեն լրացնում մնացորդային նյութերի հսկողության պլանով սահմանված և նախատեսված նյութերի ցանկը) նկատմամբ փորձաքննությունները կատարվում են կառավարության սահմանած կարգով, մրցույթի արդյունքում՝ լիազորված փորձարկման լաբորատորիաներում:

Փորձաքննությունները վճարովի ծառայություններ են, որոնց ֆինանսավորումը կատարվում է պետական մարմնի կողմից՝ միջնաժամկետ ծախսային ծրագրերի իրականացման միջոցով: Իսկ թե՝ ինչ է նշանակում մնացորդային նյութեր, ապա խոսքը անասնաբուժական դեղամիջոցների, թունաքիմիկատների, միկոտոքսինների, ծանր մետաղների, ներկանյութերի մասին է: Հասկանալի է, որ դրանց հսկողությունն էլ խիստ անհրաժեշտ է: Ծրագրի նպատակը՝ սննդամթերքի անվտանգության ապահովումը միջազգային չափանիշներով կատարելն է, նորմերի խախտումներն ու թերությունները հայտնաբերելը, վտանգավոր սննդամթերքի շուկայից հետ կանչն ու ոչնչացումը երաշխավորելը: Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության ծրագրի իրականացման համար նախատեսվում է ֆինանսավորում պետական բյուջեից:

1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Այդ իսկ պատճառով, գյուղատնտեսության ոլորտը համարվում է երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր բաղկացուցիչը:

Հայաստանը քայլեր է ձեռնարկում նաև սննդամթերքի արտադրության ծավալների ավելացման ու որակի բարձրացման ուղղությամբ, և այդ հարցում հասել է զգալի հաջողությունների: Հաշվի առնելով մեծաթիվ փոքր տնտեսությունների առկայությունը՝ մեծ ուշադրություն է դարձվում կոոպերատիվների ստեղծմանը, որի արդյունքում կսկսի զարգանալ արդյունաբերական գյուղատնտեսությունը: Կառավարությունն աջակցում է ենթակառուցվածքների զարգացմանը և իրականացնում է մի շարք նպատակային ծրագրեր՝ ուղղված հեռավոր, սահմանամերձ և բարձրլեռնային տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Հաջողությամբ իրականացվում են միջոցառումներ՝ հացահատիկային մշակաբույսերի արտադրության ավելացման ուղղությամբ, ինչը թույլ կտա էականորեն բարձրացնել երկրի ցորենի ինքնաբավության մակարդակը: Ընթացիկ տարում հանրապետությունում սննդամթերքի կարևոր տարատեսակների ինքնաբավության մակարդակը բարձրացել է, և մենք նախատեսում ենք 2017 թվականին այդ ցուցանիշը հասցնել 80 տոկոսի: Նախարարությունը վերջին մի քանի տարիներին ջանքերն ուղղել է նոր տեխնոլոգիաների ներդրմանը՝ արտադրողականության ավելացման և եղանակային ռիսկերի նվազեցման նպատակով:

Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրության միջոցով, խնդիր ենք դրել և իրականացնում ենք ծրագրեր՝ այգեգործության և անասնաբուծության ճյուղերի արտադրողականության ավելացման ուղղությամբ՝ էքստենսիվ և ինտենսիվ մեթոդների կիրառության միջոցով: Կուզենայի ընդգծել նաև պարենի անվտանգության բարելավման ոլորտում իրականացված աշխատանքները, ինչը կապահովի տեղական բնակչությանն անվտանգ և որակյալ արտադրանքով, ինչպես նաև կխթանի արտահանման ծավալների աճը: Նշված միջոցառումների իրականացման գործում կուզենայի հատուկ շեշտել ՊԳԿ-ի և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցության դերը: Կարևոր է նշել, որ առավել արդյունավետ համատեղ աշխատանքի նպատակով, 2012 թվականին ստորագրվեց «Երկրի ծրագրային առաջնահերթությունների շրջանակը 2012-2015թթ.» փաստաթուղթը, որը հնարավորություն է տալիս հասնել ռազմավարական նպատակներին, որոնք նախատեսված են ՄԱԿ-ի աջակցության ծրագրերով և նպաստում են դրանց իրականացմանը: Մենք արդեն իսկ աշխատում ենք մի քանի նոր ծրագրերի վրա և հույս ունենք, որ դրանց իրականացումը կնպաստի, որպեսզի հասնենք այս կոնֆերանսի նպատակներին»:

Համաժողովի ընթացքում ներկայացվել են սնուցման իրավիճակն աշխարհում, քննարկվել՝ սնուցման հետ կապված խնդիրներն ու մարտահրավերները, այդ բնագավառի քաղաքականության մշակմանն ու կառավարմանը վերաբերող հարցեր, կազմակերպվել են նախարարական կլոր սեղաններ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելել է Արագածոտնի մարզի Թալին քաղաքում գործող «Բարվա» ինովացիոն հետազոտական կենտրոն: Այն մասնագիտացած է տնտեսության տարբեր ճյուղերի (գյուղատնտեսություն, էներգետիկա) համար նախատեսված ինովացիոն և բարձր տեխնոլոգիական սարքավորումների նախագծման ու արտադրության գործում:

Վարչապետը շրջայց է կատարել ինովացիոն կենտրոնի տարածքում, ծանոթացել տարբեր կայանների հզորություններին և արտադրվող սարքավորումներին՝ «Զենիթ» հակակարկտային (ավելի արդյունավետ են և մատչելի արտասահմանյան նմանատիպ հակակարկտային կայաններից), անտիֆրոստ (ցրտահարությունից պաշտպանություն և ջերմոցների ջեռուցում), անձրևների խթանման (աշխարհում նմանատիպը չունեցող), ինչպես նաև արևային, պիրոգազային և բիոգանգվածային (բիոգանգվածից բարձր կալորիական գազի ստացման տեխնոլոգիա) համակարգերին:

Այնուհետև, կառավարության ղեկավարի գլխավորությամբ, տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում «Բարվա»-ի նախագահ Արամ Վարդանյանը ներկայացրել է ինովացիոն կենտրոնի գործունեության ուղղությունները, արտադրական հզորությունները, արտահանման ծավալը և առաջիկա ծրագրերը: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ կառավարությունը կարևորում է ինովացիոն տեխնոլոգիաների հիման վրա արտադրության կազմակերպումը և պատրաստ է աջակցել այդ ուղղությամբ ծրագրերի իրականացմանը: Վարչապետի խոսքով՝ արդիական և արտահանման ներուժ ունեն, հատկապես՝ բիովառելիքի հիման վրա հոսանքի և գազի ստացման, անձրևների խթանման և հակակարկտային համակարգերը, որոնք կարող են արդյունավետ կիրառվել ինչպես տեղական շուկայում, այնպես էլ՝ արտերկրում:

Վարչապետ Հ. Աբրահամյանը ողջունել է ինովացիոն կենտրոնի արտադրության մեջ նորարարական տեխնոլոգիաների ներդրումը՝ տեղական մտավոր և արտադրական ներուժի կիրառմամբ և հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, «Բարվա» ինովացիոն կենտրոնի հետ համատեղ, մշակել վերոնշյալ սարքավորումների արտադրանքի վաճառքի ծավալի մեծացման ու արտահանման խթանման ծրագիր:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Հայաստանյան գրասենյակի ղեկավար Թոմաս Էբերհեռին:

Ողջունելով հյուրին՝ նախարարն ընդգծել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ԳՄՀԸ «Կենսաբազմազանության կայուն կառավարում» ծրագրի միջև վերջին տարիներին ձևավորված արդյունավետ համագործակցությունը: «Այս ընթացքում մեզ հաջողվել է բավական մեծ առաջընթաց գրանցել անտառային ոլորտում, մասնավորապես՝ անտառկառավարման ազգային տեղեկատվական համակարգի ներդրման, անտառային պետական մոնիտորինգի կենտրոնին ցուցաբերած տեխնիկական աջակցության, անտառային ոլորտում հանրային իրազեկման պիլոտային ծրագրերի նախաձեռնության, ուսուցողական աշխատանքների կազմակերպման համար: Այդուհանդերձ, այս բնագավառում դեռևս առկա են լուրջ խնդիրներ, որոնց լուծման հարցում մենք ակնկալում ենք ձեր աջակցությունը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Ծրագրի ղեկավար Թոմաս Էբերհեռն, իր հերթին, տեղեկացրել է նախարարին, որ ԳՄՀԸ ծրագրերը Հայաստանում կլինեն շարունակական: Նա նաև առաջարկել է Ծաղկաձորում՝ դեկտեմբեր ամսին, նախարարության հետ համատեղ, անցկացնել միջոցառում՝ ոլորտային

հասարակական կազմակերպությունների և ՁԼՄ ներկայացուցիչների մասնակցությամբ: Միջոցառման ընթացքում կամփոփվեն համատեղ աշխատանքներն ու կնախանշվեն առաջիկա ծրագրերը: Կարևորելով նմանատիպ միջոցառման անցկացումը՝ նախարար Սերգո Կարապետյանն իր կողմից խոստացավ աջակցել՝ միջոցառումը պատշաճ ու բարձր մակարդակով կազմակերպելու համար: Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև երկկողմ համագործակցության առաջիկա հեռանկարներին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկայում նախաձեռնել արոտների կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծումը՝ ներառնելով այն առաջիկա համատեղ ծրագրերում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՓՈԽԸՆԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ



ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության և ՄԱԿ-ի առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպված «Մնուցման հարցերով երկրորդ միջազգային համաժողովին» մասնակցելու նպատակով Իտալիայում գտնվող Հայաստանի գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ Իտալիայի գյուղատնտեսական, պարենային և անտառտնտեսական քաղաքականության նախարար Մաուրիցիո Մարտինայի հետ:

Հանդիպմանը ներկա էր Իտալիայում ՀՀ դեսպան Սարգիս Ղազարյանը:

Քննարկվեցին երկու երկրների միջև գյուղատնտեսության ոլորտում համագործակցության ու կապերի զարգացման հնարավորությունները: Նախարարները կարևորեցին իրենց գլխավորած գերատեսչությունների միջև փորձի և գիտական տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությունը:

Իտալական կողմը պատրաստակամություն հայտնեց գործնական աջակցություն ցուցաբերել Հայաստանին՝ նորագույն գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրման և կոոպերատիվների ստեղծման հարցերում:

Նախարար Սերգո Կարապետյանն իտալացի գործընկերոջը հրավիրեց այցելել Հայաստան:

Հանդիպման ավարտին՝ նախարարներ Սերգո Կարապետյանը և Մաուրիցո Մարտինան Փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին՝ Հայաստանի գյուղատնտեսության նախարարության և Իտալիայի գյուղատնտեսական, պարենային և անտառտնտեսական քաղաքականության նախարարության միջև:

Ագրոլրատու
Նոյեմբեր 17-25, 2014 թ.
թիվ 30 (2052)

1 ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի ՆՊԱՍՏ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Չնայած որոշակի դրական տեղաշարժերին, դեռևս առաջնահերթ խնդիր է ոռոգման ջրով ապահովվածությունը, ուստի, 2015 թվականից կմեկնարկեն Կապսի, Վեդու և Մաստարայի ջրամբարների նախագծման և շինարարության համակարգված աշխատանքները, սակայն հարցի վերջնական լուծումը համարվում է ոռոգման նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ կաթիլային և անձրևացման համակարգերի, աստիճանական ներդրումը: Խրախուսվելու է կարկտապաշտպան ցանցաշերտերի կիրառումը, որը, արդյունավետության բարձր ցուցանիշներով, լայն տարածում է գտել մի շարք երկրներում:

Խնդիրներ կան՝ կապված գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման, սերմնաբուծության համակարգի բարելավման, ինտենսիվ այգիների հիմնման, ջերմատնային տնտեսության զարգացման, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության աճի, կաթի որակի բարելավման, տոհմային գործի կազմակերպման, մասնավորապես՝ արհեստական սերմնավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների կիրառման, արտադրություններում ժամանակակից տեխնոլոգիաների, ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման ուղղություններով:

2015 թվականի բյուջեի նախագծով գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի իրականացման համար նախատեսված է շուրջ 14.5 մլրդ դրամ, որից գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի համար նախատեսված է հատկացնել 10.25 մլրդ դրամ. այն գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 3.28 մլրդ դրամով: Սակայն հարկ եմ համարում նշել, որ այդ գումարի հիմնական մասն առավելապես ուղղվելու է գյուղատնտեսությունում տնտեսավարողներին աջակցության ծրագրերի իրականացմանը:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի պետական բյուջեի նախագծով, նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսության ոլորտի կայունությունն ապահովող, զարգացման նախադրյալներին ուղղված մի շարք ռազմավարական ծրագրեր, ինչպես նաև ապահովել սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների պետական կարգավորումը:

Վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտի կարևոր ձեռքբերումներից կցանկանայի առանձնացնել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատման միտումների կասեցումը:

Այսպես, ընդհանուր առմամբ, 2011-2014 թվականներին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են շուրջ 50 հազ. հեկտարով: Միայն 2014 թվականին ցանքատարածություններն ընդլայնվել են 15 հազ. հեկտարով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2014 թվականին կազմել է շուրջ 74.2 %՝ 2010 թվականի 63 %-ի դիմաց:

2015 թվականին շարունակվելու են հացահատիկային տնտեսության զարգացմանն ու այդ մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Բարձրորակ սերմերով ապահովվածության մակարդակի բարձրացումը հնարավորություն տվեց, էքստենսիվ և ինտենսիվ գործոնների համադրմամբ, էապես ավելացնել հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները, մասնավորապես, օպերատիվ տվյալներով, 2014 թվականին, նախորդ տարվա համեմատ, ընդհանուր ծավալներն ավելացնել են 7.7 %-ով, այդ թվում՝ ցորենինը՝ 8.5 %-ով: Ըստ գնահատման, ցորենի ծավալների նման աճը հնարավորություն կտա ինքնաբավության մակարդակը, նախորդ տարվա նկատմամբ, ավելացնել 4-5 տոկոսային կետով:

Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված բերքի ապահովման և կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման համար կարևորվում է բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիրը, որը ներառելու է ավիացիայի միջոցով անտառի մնասատուների և հիվանդությունների դեմ պայքարը, ինչպես նաև՝ մորեխների, միջատների դեմ ինտենսիվ պայքարի աշխատանքները: Այդ ծրագիրը շարունակական է, քանզի նախորդ տարիներին տվել է դրական արդյունքներ:

Ագրոտեխնիկական պահանջներով պարարտանյութերի օգտագործման և երաշխավորված բերքատվության ապահովման նախադրյալների ստեղծման համար, կշարունակվի հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագիրը:

Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրերը, մասնավորապես «Տավարաբուծության զարգացման ծրագիրը», որը շարունակվելու է նաև 2015 թվականին:

Անասնապահական մթերքների երաշխավորված ծավալների, անվտանգ մթերքների արտադրության ապահովման համար հույժ կարևոր է գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ծրագիրը: Կիրականացվի գյուղատնտեսական կենդանիների առավել վտանգավոր հիվանդությունների 8 կանխարգելիչ և 2 ախտորոշիչ միջոցառում: Կապահովվի գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման միջոցառումների իրականացումը: Ծրագրի իրականացումից ակնկալվում է կայուն անասնաճարակային վիճակի ապահովում:

Գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ պայքարի, ինչպես նաև անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների մշակման համար, կարևորվում է «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում» ծրագիրը:

Հանրապետության անասնապահության զարգացման համար կարևորվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շարունակումը, որի նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով:

Ծրագիրը նպատակաուղղված է նաև գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանմանը, որի շրջանակներում հանրապետության 6 մարզերի շուրջ 90 համայնքներում հիմնվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ:

Օգտագործելով տնտեսավարման կոոպերատիվ ձևի առավելությունները, առկա են դրական արդյունքներ՝ կաթի մթերման կազմակերպման, դաշտային կերարտադրության ծավալների ընդլայնման ու կառուցվածքի բարելավման, անասնապահական տնտեսությունների եկամուտների ավելացման ուղղությամբ:

2015թ. կմեկնարկի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագիրը: Վերջինս կշարունակի համայնքներում իրականացնել արոտների արդյունավետ կառավարման և անասնապահության զարգացմանն ուղղված միջոցառումներ: Այն կիրականացվի հանրապետության 8 (Շիրակ, Արարատ, Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Վայոց ձոր և Կոտայք) մարզերում: Մինչև 2019 թվականը ծրագիրը կիրականացվի ևս 100 համայնքում, որոնցից 25-ը կմեկնարկի 2015 թվականին:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում իրականացվելու են նաև արժեշղթայի զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, իրացման խնդիրների լուծմանը և կատարելագործմանը:

Գյուղատնտեսության կայունության և մրցունակության բարձրացման համար կարևորում է վարկային ռեսուրսների մատչելիության մակարդակի բարձրացումը: Վերջինիս կնպաստի «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» շարունակումը:

2015 թվականի բյուջեի նախագիծը ենթադրում է՝ գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման 50 տոկոսի աճ՝ հասցնելով այն վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետի:

Ծրագրի իրականացմամբ, վարկերի մատչելիության բարձրացումը հնարավորություն կտա լուծել գյուղատնտեսությունում տնտեսավարողների առջև ծառացած մի շարք խնդիրներ, նախադրյալներ կստեղծվեն արտադրության ծավալների ավելացման և ոլորտի զարգացման համար: Ինչպես գիտեք, ծրագիրը սկսել է 2011 թվականի գարնանից և վերջինի մեկնարկից սկսած, 72 հազ. տնտեսավարողի տրամադրվել են շուրջ 63,2 մլրդ դրամի տոկոսադրույքի սուբսիդավորմամբ վարկեր: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 2.2 մլրդ դրամ: Հարկ եմ համարում նշել, որ սուբսիդավորվող վարկերի պահանջարկը՝ կախված իր մատչելիությունից, շատ ավելի մեծ է, քան տրամադրվում է այս պահին, սակայն, վարկային միջոցների հասանելիության պարագայում, ծրագրի շրջանակը հետագա տարիներին կընդլայնվի՝ ընդգրկելով ավելի մեծ թվով գյուղացիական տնտեսություններ:

Շարունակվելու են հողօգտագործողներին, գարնան և աշնան գյուղատնտեսական աշխատանքների համար, մատչելի գներով, ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերը:

Նշված սուբսիդավորման ծրագրերի գծով, 2015 թվականի բյուջեի նախագծով, նախատեսվում է հատկացնել շուրջ 4.3 մլրդ դրամի սուբսիդիա: Պատշաճ մակարդակով կապահովվի Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից ներմուծվող և արտահանվող անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների, բուսա-սանիտարական կարանտին հսկողության ենթակա բույսերի և բուսական արտադրանքի կարանտին հսկողության ընթացակարգերի ներդաշնակեցումը:

Վերջին տարիներին աշխատանքներ են տարվել գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի համալրման ուղղությամբ: 2013-2014 թվականների ընթացքում, գյուղատնտեսության նախարարության կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա, հստակեցվել է գյուղատնտեսական տեխնիկայի պահանջարկը և Բելառուսի Հանրապետության հետ բանակցությունների արդյունքում, շուկայականից շուրջ 30 տոկոս ցածր գներով, ներկրվել է 300 միավոր անիվավոր տրակտոր և 150 անվանում գյուղատնտեսական գործիքներ: Տեխնիկան տրամադրվում է ինչպես ուղղակի վաճառքի, այնպես էլ՝ լիզինգային եղանակով: Առաջիկայում նախատեսվում է նաև հացահատիկահավաք կոմբայնների ներկրում և մատչելի մեխանիզմներով մատակարարում:

Նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակի» միջոցով, 2012-2014թթ., տրամադրվել է 467 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 115 միավոր անիվավոր տրակտոր, դրանց դիմաց գյուղատնտեսությունում տնտեսավարողները վճարում են միայն տեխնիկայի արժեքի 20 տոկոսը: Կշարունակվեն աշխատանքները գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացման, կաթի որակի ապահովման և տոհմային գործի բարելավման ուղղությամբ: Առանձնակի ուշադրություն կդարձվի արհեստական սերմանավորման ծավալների ընդլայնմանը:

Միջոցներ կձեռնարկվեն գյուղատնտեսական մթերքների իրացման համակարգի բարելավման ու կատարելագործման, մասնավորապես՝ գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների պայմանագրային հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Այս ուղղությամբ կարևորվում է ոլորտային միությունների ստեղծումը՝ ինչպես գյուղատնտեսական մթերքներ արտադրողների, այնպես էլ՝ վերամշակողների համար. այդ գործընթացն արդեն սկսվել է:

Առաջիկայում կշարունակվի գյուղատնտեսությունում կոոպերատիվների ձևավորման խթանման և դրանց գործունեության աջակցության գործընթացը: Այն կիրականացվի՝ ինչպես վարկային և այլ ծրագրերի համապատասխան բաղադրիչների շրջանակներում, գյուղատնտեսական կոոպերատիվների բազմաբնույթ աջակցության, այնպես էլ՝ նախարարության խորհրդատվական համակարգի կողմից համապատասխան տեխնիկական օժանդակության միջոցով: Այս գործընթացում կարևորում ենք նաև «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի ընդունումը, որի նախագիծը մշակվել է նախարարության կողմից:

Առանձնակի կարևորում ենք նաև «Գյուղի և գյուղատնտեսության մասին» օրենքների նախագծի ընդունումը: Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծման նպատակով, նախատեսվում է ոլորտում ապահովագրության փորձնական ծրագրի իրականացում, որի ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ է տարվում «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության հետ:

Այսպիսով, հակիրճ ներկայացվեցին՝ 2015 թվականի ՀՀ պետական բյուջեի նախագծով և այլ աղբյուրների հաշվին, գյուղատնտեսության նախարարության և սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացման համար նախատեսված առաջնահերթ անհրաժեշտ ծրագրային ուղղությունները, որոնք նպատակաուղղվելու են գյուղատնտեսությունում տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, ճյուղի մրցունակության բարձրացմանը, արդյունքում՝ ոլորտի կայունացմանն ու զարգացմանը, սննդամթերքի և պարենային անվտանգության ապահովմանը:

Սերգո ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ գյուղատնտեսության նախարար

ԱՍՈՒԼԻՍ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Գալստյանը, մամուլի ասուլիսի ընթացքում, ամփոփել է բուսաբուծության ոլորտում գյուղատնտեսական տարվա արդյունքները: Նախարարի տեղակալը հայտնել է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության ծավալները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը՝ բացառությամբ պտղի, որը պայմանավորված է գարնանային ցրտահարությամբ:

Մասնավորապես՝ 2014 թվականի օպերատիվ տվյալներով, հանրապետությունում արտադրվել է 591 հազար տոննա հացահատիկ և հատիկաընդեղեն՝ 2013 թվականի 548,7 հազար տոննայի դիմաց, 340 հազար տոննա ցորեն՝ նախորդ տարվա 311,5 հազար տոննայի դիմաց և 245 հազար տոննա բոստանային մշակաբույսեր՝ 208 հազար տոննայի դիմաց, 947 հազար տոննա բանջարեղեն՝ նախորդ տարվա 876 հազար տոննայի դիմաց, 691 հազար տոննա կարտոֆիլ՝ 660,5 հազար տոննայի դիմաց, 296 հազար տոննա պտուղ և հատապտուղ՝ 2013 թվականի 338,1 հազար տոննայի դիմաց և 258 հազար տոննա խաղող՝ նախորդ տարվա 240,8 հազար տոննայի դիմաց: «Գարնանային ցրտահարությունից տուժած հատկապես՝ ծիրանենու այգիներին պատճառված վնասները մեղմելու նպատակով, այդ մարզերի գյուղացիական տնտեսություններին, ՀՀ կառավարության որոշմամբ, անհատույց հատկացվել է 85 մլն դրամի բանջար-բոստանային մշակաբույսերի սերմացուներ, 100%-ով զիջվել է հողի հարկը (շուրջ 161 մլն դրամ), 50%-ով՝ ջրի վարձը (366 մլն դրամ), իսկ բանկերից վարկեր վերցրած տնտեսությունների նկատմամբ ցուցաբերվել է անհատական մոտեցում»,- նշել է Սամվել Գալստյանը:

Նա նաև տեղեկացրել է, որ Շիրակի մարզի 37 և Լոռու մարզի 15 համայնքներում կարկտահարության հետևանքով պատճառված վնասները մեղմելու նպատակով այդ համայքների հողօգտագործողներին 2013 թվականին հատկացված աշնանացան ցորենի սերմացուների գումարների վերադարձը կքննարկվի 2015թ. հուլիսին:

Գյուղատնտեսության նախարարի տեղակալի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2011-2014 թթ. շուրջ 49,1 հազ. հեկտարով ավելացել են մշակվող ցանքատարածությունները, 2010 թվականին դրանք կազմել են 283,6 հազ. հեկտար, 2014 թվականին՝ 332,7 հազ. հեկտար, որը 2013 թվականից ավել է 14,6 հազ. հեկտարով:

Այս տարի ՀՀ մարզերի հողօգտագործողներին նախատեսվել է հատկացնել 33822 տոննա ազոտական պարարտանյութ, որից 1000 տոննա՝ ԼՂՀ-ին և 2645 ֆոսֆորական (500 տոննա՝ ԼՂՀ-ին) և 1619 տոննա կալիումական պարարտանյութեր:

«Ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերն այս տարի ներկրվում են առաջին անգամ, որով հնարավոր կլինի կանխել մինչ այդ կատարվող հողերի միակողմանի պարարտացումը»,- հավելել է Սամվել Գալստյանը: Նա նաև տեղեկացրել է, որ ընթացիկ տարվա գարնանը, ՀՀ մարզերից ստացված պահանջարկի համաձայն, ներկրվել և տեղական սերմարտադրողներից գնվել է գարնանացան մշակաբույսերի, մասնավորապես՝ գարու՝ 2056 տոննա, եգիպտացորենի 23,4 տոննա, առվույտի 168,4 տոննա և կորնգանի 178 տոննա սերմացու, որի մի մասը գարնանը չի իրացվել՝ վճարունակ պահանջարկ չլինելու պատճառով, և այն, կառավարության որոշմամբ, անհատույց հատկացվել է պահանջարկ ներկայացրած մարզերին՝ 2015թ. գարնանը ցանք կատարելու նպատակով:

2014թ. աշնանացանի համար ՀՀ մարզերի հողօգտագործողներին՝ ըստ գոտիների, հատկացվել է 4213 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ ՉԻ ԼԻՆԻ

Նոյեմբերի 12-ից մսամթերք արտադրող 11 ընկերություն թույլտվություն են ստացել իրենց արտադրանքն արտահանելու Ռուսաստանի դաշնություն, իսկ 2015 թվականից՝ նաև ԵՏՄ անդամ երկրներ: Այդ մասին ասել է ՀՀ ԳՆ Մննդամթերքի անվտանգության պետական ծառայության անասնաբուժության տեսչության պետ Հովհաննես Մկրտչյանը: Հարցին, թե արդյո՞ք այդ արտադրողներն առիթից չեն օգտվի և իրենց արտադրանքը չե՞ն թանկացնի, տեսչության պետն ասաց, որ ներքին շուկայում գների թանկացում չի լինի, քանի որ մսամթերքի հումքը ներկրվում է Եվրոպայից, իսկ այնտեղ հումքն էժանացել է: Բացի այդ, արտադրողներն իրենց հնարավորությունների 30 տոկոսով են աշխատում և կարող են առանց խնդիրների ավելացնել իրենց արտադրական ծավալները: Պարոն Մկրտչյանի խոսքերով՝ խոզերի ժանտախտով պայմանավորված, երկար տարիներ մսամթերքի արտահանումը դեպի Ռուսաստան՝ արգելված էր: Տեսչության պետը լրատվամիջոցներին կոչ արեց մսամթերքի շուկայի մասին տեղեկություն հրապարակելիս, անպայման ճշտումներ անել պետական աղբյուրից, քանի որ Արաբական էմիրությունները հետաքրքրված են Հայաստանի մսամթերքով և ցանկացած չճշտված տեղեկություն կխոչընդոտի արտահանմանը: Տեսչության պետը նաև ասաց, որ այդ 11 ընկերություններով ցուցակը չի սահմանափակվում, պարզապես, այս ընկերություններն են իրենց արտադրանքով համապատասխանում Մաքսային Միության օրենսդրության պահանջվող չափանիշներին: Հարցին, թե Հայաստանը մսամթերք ներմուծող երկիր է, արդյո՞ք տեղական շուկայում պահանջարկ չի առաջանա, պարոն Մկրտչյանն ասաց, որ մեր մսամթերքի հումքի 90 տոկոսը ներկրված է, և Ռուսաստանը պարտադիր պահանջ չի դրել, որ արտահանվող մսամթերքը պետք է լինի տեղական հումքով: Սակայն, պատժամիջոցներով պայմանավորված, մի շարք երկրների նկատմամբ ՌԴ-ն սահմանափակումներ է դրել, որ հումքն այդ երկրներից չլինի: Նշենք, որ մեր երկրից տարեկան արտահանվում էր 2500-3000 տոննա մսամթերք: Ներկայումս ռուսական շուկայում կա խոզի և թռչնամսի պահանջարկ: Այժմ արտահանվող մսամթերքի հումքը պետք է բերվի Պարագվայից, Բրազիլիայից, Իտալիայից, Գերմանիայից, Արգենտինայից: Պարոն Մկրտչյանի խոսքերով՝ մինչև տարեվերջ կունենաք հինգ սպանդանոց և աստիճանաբար դրանց թիվը կավելանա: Ըստ նրա, իրացվող միսը, պարտադիր, պետք է մորթվի սպանդանոցում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Օրերս Երևանում կայացավ «Աջակցություն գյուղական տուրիզմին Հայաստանում» խորագրով քննարկումը: Կլոր սեղանը կազմակերպվել էր Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրի շրջանակներում: Նպատակը մեկն էր, որպեսզի կապեր հաստատվեն գյուղական տուրիզմի ոլորտում ծառայություններ մատուցողների և ֆինանսական և ոչ ֆինանսական ծառայություններ մատուցողների միջև, ներառյալ միկրո վարկեր տրամադրող կազմակերպությունները, բիզնես ասոցիացիաները, բիզնեսի աջակցություն տրամադրող կենտրոնները, որոնք մատուցում են ֆինանսական և ոչ ֆինանսական խորհրդատվության և աջակցության ծառայություններ:

Ընթացքում քննարկվեցին գյուղական տուրիզմի ոլորտում առկա ֆինանսական աջակցության և խորհրդատվության հնարավորությունները: «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրը Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի և Թուրքիայի միջև տարածաշրջանային ծրագիր է, որը նպատակ ունի խթանել գյուղական տուրիզմը և տարածաշրջանային համագործակցությունը: «Մեր հանդիպման նպատակն է՝ կապեր հաստատել տուրիզմի ոլորտում ծառայություններ մատուցողների և միկրոֆինանսավորող և վարկային կազմակերպությունների միջև՝ նրանց աջակցելու զարգացնել իրենց գործարարությունը և ընդլայնել հարակից ծառայությունները ֆինանսական խորհրդատվության, ծառայությունների և գյուղական տուրիզմի զարգացման ուղղությամբ՝ առկա վարկերի տրամադրման միջոցով»,- նշել է ծրագրի համակարգող Աննա Առաքելյանը: Տիկին Առաքելյանը հավելել է, որ նա ավելի քան համոզված է, որ ֆինանսական կազմակերպությունների և տուրիզմի ոլորտում ծառայություն մատուցողների միջև հաստատված կապերը կբերեն արդյունավետ համագործակցության՝ խթանելու տուրիզմի ոլորտում պահանջարկ ունեցող ծառայությունների զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում կստեղծվեն ուսուցում ստացած և հմտություններ ունեցող՝ գյուղական զբոսաշրջության ոլորտում տեղական ծառայություններ մատուցողների և տուրիստական գործակալությունների ցանցեր: Արդյունքում կավելանա զբոսաշրջիկների ներհոսքը դեպի տարածաշրջան:

Լիանա Շախնազարյան

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

«Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) հասարակական կազմակերպությունը և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ), Շվեյցարիայի Համադաշնության Զարգացման և Համագործակցության Գործակալության (ՇԶՀԳ) ֆինանսավորմամբ և ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ, 2013 թվականից իրականացնում է «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ» ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ ակտիվացնել անասնապահության ոլորտը Սյունիքի մարզում՝ նպաստելով սննդի անվտանգության համակարգի վերականգնմանը և ՀՀ-ում գյուղատնտեսության կայուն զարգացմանը, ինչպես նաև կրճատել բրուցելյոզով վարակվածության դեպքերի քանակը մանր և խոշոր եղջերավոր կենդանիների մոտ՝ դարձնելով այն ոչ ռիսկային բնակչության և կենդանիների համար: Սոցիալական մակարդակով ծրագրի ազդեցությունը կդրսևորվի բնակչության եկամուտների աճով և գյուղական համայնքների բնակչության, այդ թվում՝ կանանց և երեխաների առողջական ստանդարտների բարելավմամբ: Ծրագրի նպատակներն իրագործելու համար սահմանվել է եռամյա ժամանակահատված:

Ծրագրի շրջանակներում, 2013 թվականին ՀՀ Սյունիքի մարզի բոլոր համայնքներում մեկնարկել են բրուցելյոզ հիվանդության նկատմամբ պատվաստման աշխատանքները: Պատվաստման փորձնական ծրագրի նպատակն է՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիներին պատշպանել բրուցելյոզից՝ նվազեցնելով հիվանդության տարածումը, հիվանդ կենդանիների քանակը և վարակի տարածման հնարավորությունները՝ այն դարձնելով հասանելի արդեն հանրապետության ողջ մասշտաբով:

Վերջերս, Ծաղկաձորում տեղի ունեցավ հերթական աշխատաժողովը՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Անասնաբուժասանիտարիայի, սննդի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների, ինչպես նաև Սյունիքի մարզի Սիսիանի, Գորիսի, Կապանի և Մեղրիի տարածաշրջանների անասնաբույժների մասնակցությամբ: Աշխատաժողովին մասնակցում էին նաև անասնաբույժներ Կոտայքի մարզի չորս (Գեղաշեն, Արամուս, Կամարիս և Ջովք) համայնքներից: Քննարկվեց բրուցելյոզի նկատմամբ պատվաստումների աշնանային աշխատանքների իրականացման ընթացքը և վարակի նկատմամբ հետագա ռազմավարության մշակման գործընթացի կազմակերպումը (աշխատանքային խմբի ստեղծում՝ բաղկացած շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներից): Աշխատաժողովի ընթացքում, մասնագետների հետ համատեղ, քննարկվեցին բրուցելյոզի նկատմամբ պատվաստումների՝ նախորդ փուլերի ընթացքում ծագած խնդիրները և դրանց վերացմանն ուղղված անհրաժեշտ քայլերը: Անասնաբույժներից բաղկացած աշխատանքային խմբերը կազմեցին աշնանային պատվաստումների աշխատանքային պլան: Հանդիպման վերջում անասնաբույժների հետ կնքվեցին աշխատանքային պայմանագրեր:

Հիշեցնենք, որ խոշոր և մանր եղջերավոր կենդանիներին բրուցելյոզի դեմ պատվաստման հերթական աշնանային փուլը Սյունիքի մարզում մեկնարկել է ս.թ. <u>նոյեմբերի 17-ից և կտևի մինչև 2015 թվականի հունվարի 30-ը</u>:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿՈՎԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ՅՈՒՂԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶԱՆԳՎԱԾԻ ՈՐՈՇՈՒՄ

Ներկայումս կովերի կաթնատվության և կաթի յուղայնության հաշվառումը՝ ըստ առանձին կովերի, կատարվում է տոհմային գործունեություն իրականացնող նախիրներում, իսկ ապրանքային նախիրներում հիմնականում հաշվառում չի անցկացվում: Սակայն, գյուղացիական տնտեսություններին հաճախ անհրաժեշտ է լինում իմանալ իրենց կովերի տարեկան կաթնատվության և կաթի յուղայնության չափը: Իսկ դա անհրաժեշտ է՝ կովերի կերակրումը կարգավորելու, դրանցից իսկ ստացված լավագույն սերունդը նախրի վերարտադրության նպատակով ընտրելու, ցածր մթերատուներին խոտանելու համար:

Սովորաբար, տոհմային գործունեություն իրականացնող տնտեսություններում /հիմնականում՝ տոհմային տնտեսություններ/ ընդունված է կովերի տարեկան կաթնատվությունը որոշել ստուգիչ կիթերի միջոցով, ինչը կատարվում է 10-15 օրը մեկ, հաճախ էլ՝ ամիսը մեկ անգամ:

Այդ ճանապարհով ստացված ամսական կիթերի քանակները գումարելով, դուրս է բերվում կովերի կաթնատվությունը լակտացիայի 10 ամսում (305 օր) կամ տարվա ընթացքում:

Ամսական մեկ անգամ անցկացվող ստուգիչ կիթերի դեպքում՝ օրական կիթը բազմապատկում ենք 30 կամ 31 օրով, երկու անգամվա դեպքում՝ 15-օրով և ստանում կովի ամսական կիթը, ապա գումարելով կիթերն՝ ըստ ամիսների, որոշում ենք կովի տարեկան կաթնատվությունը: Սակայն, ամեն ամիս կովերի կաթնատվության որոշումը՝ ստուգիչ կիթերի միջոցով, բավականին աշխատատար գործընթաց է և, փաստորեն, գյուղացիական տնտեսությունների ապրանքային նշանակություն ունեցող նախիրներում հիմնականում այն չի կատարվում:

Տավարի կենդանի զանգվածի որոշման ցուցանակ (ըստ Ֆրովեյնի) A–ն՝ կրծի փաթն է, B-ն՝ իրանի թեք երկարությունն է:

Կրծի փաթը, սմ	Կենդանի զանգվածը	Գործակից	Կրծի փաթը, սմ	Կենդանի զանգվածը, կգ	Գործակից	Կրծի փաթը, սմ	Կենդանի զանգվածը, կգ	Գործակից
1	2	3	1	2	3	1	2	3
65	23,5	0,4	117	142	0,7	169	398	1,2
6	24,5	0,4	8	145	0,7	170	401	1,2
7	25,5	0,4	9	149	0,8	1	404	1,2
8	27,4	0,4	120	152	0,8	2	407	1,2
9	28,5	0,4	1	155	0,8	3	410	1,3
70	30,0	0,4	2	158	0,8	4	413	1,3
1	31,0	0,4	3	162	0,8	175	416	1,3
2	32,5	0,4	4	166	0,8	6	420	1,3
3	34,5	0,4	5	170	0,8	7	424	1,3
4	35,5	0,4	6	174	0,8	8	428	1,3
5	37,0	0,4	7	178	0,8	9	432	1,3
6	38,5	0,4	8	182	0,8	180	436	1,3
7	40,0	0,4	9	186	0,8	1	440	1,3
8	41,5	0,4	130	190	0,8	2	446	1,3
9	43,5	0,4	1	194	0,9	3	453	1,3
80	45,0	0,5	2	198	0,9	4	460	1,3
1	47,0	0,5	3	202	0,9	185	470	1,3
2	48,5	0,5	4	206	0,9	6	480	1,3
3	50,0	0,5	5	210	0,9	7	490	1,3
4	51,5	0,5	6	214	0,9	8	500	1,4
5	53,5	0,5	7	219	0,9	9	510	1,4
6	55,5	0,5	8	225	0,9	190	520	1,4
7	57,0	0,5	9	232	0,9	1	530	1,4
8	58,5	0,5	140	239	1,0	2	540	1,4
9	60,5	0,6	1	244	1,0	3	550	1,4
90	63,0	0,6	2	248	1,0	4	560	1,4
1	65,5	0,6	3	252	1,0	195	570	1,4
2	68,0	0,6	4	255	1,0	6	580	1,4
3	70,5	0,6	5	259	1,0	7	590	1,4
4	72,5	0,6	6	262	1,0	8	600	1,4
5	74,5	0,6	7	266	1,0	9	610	1,4
6	77,0	0,6	8	269	1,0	200	620	1,4
7	79,6	0,6	9	272	1,0	1	630	1,5
8	82,0	0,6	150	275	1,0	2	640	1,5
9	84,5	0,7	1	280	1,0	3	650	1,5
100	87,0	0,7	2	284	1,0	4	660	1,5
1	89,5	0,7	3	290	1,0	205	670	1,5
2	92,0	0,7	4	296	1,0	6	682	1,5
3	95,0	0,7	155	302	1,0	7	694	1,5
4	98,0	0,7	6	305	1,1	8	706	1,5
5	101,0	0,7	7	306	1,1	9	716	1,5
6	104,5	0,7	8	311	1,2	210	725	1,5
7	108,5	0,7	9	315	1,2	1	734	1,5
8	111,5	0,7	160	322	1,2	2	743	1,5
9	115,0	0,7	1	330	1,2	3	752	1,5
110	118,5	0,7	2	340	1,2	4	761	1,5
1	122	0,7	3	350	1,2	215	770	1,6
2	125	0,7	4	356	1,2	6	778	1,6
3	128	0,7	165	364	1,2	7	786	1,6
4	132	0,7	6	373	1,2	8	794	1,6
5	135	0,7	7	381	1,2	9	802	1,6
6	139	0,7	8	390	1,2	220	810	1,6

Կովերի տարեկան կաթնատվության որոշման մեկ օրվա հաշվառման աղյուսակ

Լակտացիայի ամիսները										Կաթնատվությունը լակտացիայի 10 ամսում
1	2	3	4	5	6	7	8	9	10	
Միջին օրական կիթը, կգ										
9.3	9.3	8.6	7.9	7.2	6.6	5.9	5.1	4.1	2.7	2000
9.7	9.7	9.0	8.3	7.6	6.9	6.2	5.3	4.3	2.9	2100
10.1	10.1	9.4	8.6	7.7	7.6	6.5	5.6	4.6	3.2	2200
10.5	10.5	9.8	9.0	8.3	7.6	6.8	5.9	4.8	3.4	2300
11.0	11.0	10.2	9.4	8.6	7.2	7.1	6.2	5.1	3.6	2400
11.4	11.4	10.6	9.7	9.0	8.2	7.4	6.5	5.3	3.9	2500
11.8	11.8	11.0	10.1	9.3	8.5	7.7	6.7	5.6	4.1	2600
12.2	12.2	11.4	10.5	9.6	8.9	8.0	7.0	5.9	4.3	2700
12.7	12.7	11.8	10.8	10.0	9.2	8.3	7.3	6.1	4.6	2800
13.1	13.1	12.2	11.2	10.3	9.5	8.6	7.6	6.4	4.8	2900
13.5	13.5	12.5	11.6	10.7	9.8	8.9	7.8	6.6	5.1	3000
13.9	13.9	12.9	11.9	11.0	10.1	9.2	8.1	6.9	5.3	3100
14.4	14.4	13.3	12.3	11.3	10.4	9.5	8.4	7.1	5.5	3200
14.8	14.8	13.7	12.7	11.7	10.8	9.8	8.7	7.4	5.8	3300
15.2	15.2	14.1	13.1	12.0	11.1	10.1	8.9	7.6	6.0	3400
15.6	15.6	14.5	13.4	12.3	11.4	10.4	9.0	7.9	6.2	3500
16.0	16.0	14.9	13.8	12.7	11.7	10.7	9.5	8.2	6.5	3600
16.5	16.5	15.3	14.2	13.0	12.0	11.0	9.8	8.4	6.7	3700
16.9	16.9	15.7	14.5	13.4	12.3	11.3	10.0	8.7	6.9	3800
17.3	17.3	16.1	14.9	13.7	12.7	11.5	10.3	8.9	7.2	3900
17.8	17.8	16.5	15.3	14.1	13.0	11.8	10.6	9.2	7.4	4000
18.2	18.2	16.9	15.6	14.4	13.3	12.1	10.9	9.4	7.7	4100
18.6	18.6	17.3	16.0	14.8	13.6	12.4	11.1	9.7	7.9	4200
19.0	19.0	17.7	16.4	15.1	13.9	12.7	11.4	9.9	8.1	4300
19.5	19.5	18.1	16.7	15.4	14.2	13.0	11.7	10.2	8.4	4400
19.9	19.9	18.5	17.1	15.8	14.6	13.3	12.0	10.4	8.6	4500
20.3	20.3	18.9	17.5	16.1	14.9	13.6	12.2	10.7	8.9	4600
20.7	20.7	19.3	18.8	16.5	15.2	13.9	12.5	10.9	9.1	4700
21.1	21.1	19.7	18.2	16.8	15.5	14.2	12.8	11.2	9.3	4800
21.6	21.6	20.1	18.6	17.1	15.8	14.5	13.1	11.5	9.6	4900
22.0	22.0	20.4	18.9	17.5	16.2	14.8	13.3	11.7	9.8	5000

Ուսումնասիրությունները հավաստում են, որ՝ ընդամենը մեկ օրվա հաշվառման տվյալներով, հնարավոր է որոշել կովի մոտավոր կաթնատվությունը լակտացիայի կամ տարվա ընթացքում: Այդ նպատակով առաջարկվում է օգտվել աղյուսակի տվյալներից, համաձայն որի, եթե կովը գտնվում է լակտացիայի առաջին կամ երկրորդ ամսում և հաշվառման օրը տվել է 9.3 կգ կաթ (կարող են լինել 200-300 գր. տատանումներ), ապա այդ կովի կաթնատվությունը, տարվա կամ լակտացիայի 10 ամսվա ընթացքում, կկազմի 2000 կգ, իսկ եթե օրական կիթը եղել է 11.4 կգ, ապա կաթնատվությունը կկազմի 2500 կգ և այդպես՝ համաձայն աղյուսակում բերված տվյալների:

Ապրանքային նախիրներում կովերի կաթի տարեկան միջին յուղայնությունը, կաթում յուղի %-ը կարելի է որոշել նաև կարճ եղանակով:

ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԿԿԱՅՈՒՆԱՆԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Օրերս կայացավ այցելություն Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Հարավային Կովկասի երկրներում, անտառների տրանսֆորմացիայի միջոցով, անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ» ծրագրի պիլոտային տարածք, որը գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի անտառտնտեսությունում (Լոռու մարզ, Սպիտակ քաղաքի հարևանությամբ):

Այցի նպատակն էր՝ ցուցադրել ծրագրով մինչ այժմ իրականացված դաշտային գործողությունները, ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն՝ ծրագրի ընթացիկ գործունեության վերաբերյալ:

Այցին մասնակցում էր շուրջ 40 ներկայացուցիչ՝ պետական կառույցներից, միջազգային կազմակերպություններից, նաև լրագրողներ: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, Եվրամիության պատվիրակության և Անդրսահմանային միացյալ քարտուղարության (TJS) ներկայացուցիչները: «Ծրագիրն ունի նաև կրթական բաղադրիչ, որի շրջանակներում բազմաթիվ այցելություններ են իրականացվել Լեռնանցքի (որի հարևանությամբ է գտնվում ծրագրի պիլոտային տարածքը) և նրան հարակից համայնքների դպրոցներ: Հետագայում ստեղծվելու է հատուկ ուղեցույց՝ անտառի տրանսֆորմացիայի վերաբերյալ:

«Ծրագրի շրջանակներում կարևորում ենք նաև տեղական համայնքների հզորությունների և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը: Այդ նպատակով ստեղծվել են նոր աշխատատեղեր: Լեռնանցքի շուրջ 24 հա պիլոտային տարածքում աշխատում են համայնքների բնակիչներ, որոնց համար իրականացվել են նաև հանրային իրազեկման լայնածավալ գործողություններ»,- ասում է ծրագրի համակարգող Արթուր Ալավերդյանը:

Ծրագիրը Հայաստանում իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի կողմից և ուղղված է

անտառների կայունության բարձրացմանը՝ կլիմայի փոփոխության նկատմամբ: Ծրագրի ընդհանուր նպատակն է՝ մեղմացնել կլիմայի փոփոխության ազդեցությունը և բարելավել կենսաբազմազանությունը, ինչպես նաև տեղի բնակչության կենսակերպը:

Պիլոտային ծրագրի երկու տարածքները (ընդհանուր՝ 150 հա) գտնվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի և Նոյեմբերյանի անտառտնտեսություններում, համապատասխանաբար՝ Լոռու և Տավուշի մարզերում: «Ծրագրի շրջանակներում, Գուգարքի անտառտնտեսության տարածքում տնկվել են ավելի քան 80 հազար տարբեր տեսակի ծառատեսակներ՝ թեղի, կաղնի, հացենի և այլն: Ցանվել է ավելի քան 1300 կգ կաղնու սերմ, իսկ Նոյեմբերյանի անտառտնտեսությունում տնկվել շուրջ 70 հազար տնկի: Կլիմայական այդպիսի բարդ պայմաններում շատ դժվար է ծառատունկ և հետագա խնամք իրականացնել: Այդպիսով, «Հայանտառի» աշխատակիցներին դեռևս սպասվում է անտառների պահպանության և խնամքի ծանր աշխատանք»,- ասում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթևոսյանը:

Կովկասյան ծրագրերի պատասխանատու Մաթիաս Լիխթենբերգերը կարևորեց ծրագիրը՝ ելնելով այն նոր տարածքներում կիրառելու տեսանկյունից: Ըստ ծրագրի, պիլոտային տարածքները կվերածվեն ավելի կայուն և բնական անտառատարածքի: «Ծրագրի արդյունքում՝ միատարր ծառուտները, տվյալ պարագայում՝ սոճուտները, փոխարինվել են խառը տեսակներով, որոնք կլիմայի բացասական ազդեցությունների նկատմամբ ավելի կայուն են: Իրականացված տրանսֆորմացիոն աշխատանքները միաժամանակ նպաստում են կենսաբազմազանության ապահովմանը»,- ասում է WWF կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը: Տարածքների ցանկապատումն ավարտվել է 2012թ.-ի վերջին: Անտառի տրանսֆորմացիայի գործողությունները սկսվել են 2012թ.-ի աշնանը և կավարտվեն 2015թ.-ի գարնանը:

Այցի մասնակիցները նկատեցին նաև, որ տնկված ծառատեսակներն աչքի են ընկնում բարձր կպչողունակությամբ, ինչի շնորհիվ, առաջիկա տարիներին, կունենանք անտառածածկ նոր տարածքներ:

Նելլի Սահակյան

5 ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿՈՎԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ՅՈՒՂԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՋԱՆԳՎԱԾԻ ՈՐՈՇՈՒՄ

Սովորաբար, տոհմային տնտեսություններում կովերի կաթի միջին յուղի պարունակությունը որոշում են ամիսը կամ երկու ամիսը մեկ անգամ, այնուհետև, համապատասխան հաշվարկներով, դուրս է բերվում միջին յուղայնության տոկոսը՝ լակտացիայի 10 ամսվա կամ տարվա կտրվածքով: Հայտնի է, որ գոյություն ունի կաթի յուղայնության որոշման երկու եղանակ՝ քիմիական անալիզների միջոցով լաբորատոր սարքավորումներով, որոնցով կաթի մեջ յուղի, ինչպես նաև սպիտակուցի պարունակությունը որոշում են ընդամենը մի քանի վայրկյանների ընթացքում:

Կարճ եղանակով կովերի կաթի տարեկան միջին յուղանությունը կարելի է որոշել՝ օգտվելով նշված եղանակներից որևէ մեկով և մեկ անգամվա անալիզի տվյալներով, դուրս բերել տարեկան միջին ցուցանիշը: Այդ դեպքում, լակտացիայի առաջին 4 ամսվա ընթացքում որոշված որևէ օրվա կաթի յուղայնության տոկոսը բազմապատկում ենք 1.05 գործակցով կամ լակտացիայի 5-7 ամիսներին որոշված որևէ օրվա կաթի յուղայնության տվյալը բազմապատկում՝ 0.98 գործակցով: Ստացված թիվը ցույց կտա կովի կաթի տարեկան մոտավոր միջին յուղայնությունը: Լակտացիայի առաջին 4 ամիսների որևէ օրում որոշված կաթի յուղայնությունը, որը կազմել է 3.8 %, բազմապատկելով 1.05 գործակցով, կստացվի 3.99: Այսպիսով, կովի կաթի տարեկան միջին յուղայնությունը կկազմի 3.99 %:

Կաթի միջին յուղայնության որոշման այս եղանակը չնայած չի ապահովում շատ բարձր ճշտություն, սակայն մատչելի է, աշխատատար չէ և չի պահանջում մեծ ծախսեր ու դժվարություններ:

Փաստորեն, լակտացիայի ընթացքում, 10 անգամվա անալիզների փոխարեն, կատարվում է ընդամենը մեկը: Այսպիսով, գյուղացիական տնտեսությունների (ոչ տոհմային) նախիրներում կովերի կաթնատվության և կաթի յուղի պարունակության որոշումը, մեկ օրվա հաշվառման տվյալներով, հնարավորություն է տալիս մոտավոր պատկերացում ունենալ դրանց լակտացիայի 10 ամսվա կամ տարեկան մթերատվության վերաբերյալ:

Տավարի նախրի նպատակամետ վարման բազմաթիվ գործընթացներ իրականացնելիս, հարկ է զգացվում կողմնորոշվել նաև կենդանու զանգվածը բնութագրող ցուցանիշներով: Դրա կարիքը զգացվում է, հատկապես, կենդանուն հաշվեկշռված կերաբաժիններով կերակրելու, աճեցման ընթացքը կարգավորելու և հսկելու, վերարտադրությունը կազմակերպելու, դրանց գնահատելու, ընտրելու, իրացնելու, ինչպես նաև անասնաբուժական միջոցառումներն իրականացնելու դեպքում: Սովորաբար, տավարի տարբեր սեռահասակային խմբերում ընդգրկված առանձին կովերի կենդանի զանգվածը որոշում են կշռումներով: Կան նաև ոչ քիչ թվով հմուտ մասնագետներ, ովքեր օժտված են ոչ միայն աչքաչափով, այլև չնչին տարբերությամբ, իրենց հետաքրքրող կենդանու կշիռը որոշելու ունակությամբ:

Սակայն, քանի որ ոչ բոլոր տեղերում և դեպքերում են հնարավոր կենդանիների կշռումները և հատկապես՝ նշված հմտություններ ունեցողների ներկայության ապահովումը, ուստի կարելի է կիրառել մարմնամասերի չափումների միջոցով կենդանի զանգվածը որոշելու եղանակը:

Անասնապահության բնագավառի մի շարք գիտնականներ և առաջատար ֆերմերներ մշակել և առաջարկել են կենդանու մարմնամասերի չափումներով դրա կենդանի զանգվածը որոշելու նաև այլ եղանակներ: Ընդ որում, հաշվի են առնվել կենդանու ցեղայնությունը, մթերատու ուղղությունը, հասակը, աճեցման, պահվածքի, նույնիսկ, տարածաշրջանի առանձնահատկությունները:

Ինչպես հարթավայրային, այնպես էլ՝ լեռնային տարածաշրջաններում տավարի բուծվող ցեղերի կենդանի զանգվածի որոշման համար երաշխավորելի է՝ հատկապես անասնաբույծ Ֆրովեյնի մշակած մեթոդը, որի դեպքում առավել ճշգրիտ է ստացվում կենդանու հաշվարկված կշիռը:

Ըստ Ֆրովեյնի մեթոդի, կենդանին կանգնեցվում է հարթ տեղում, մարմնի ու ոտքերի ուղիղ դրվածքով, ձախ կողմից ժապավենով չափվում են կենդանու կրծի փաթը և իրանի թեք երկարությունը:

Չափման ճշտությունն ապահովելու համար երբեմն կարիք է զգացվում փոխել և շտկել կենդանու դիրքը, չափել մի քանի անգամ, այդ դեպքում նաև աջ կողմից, և գտնել դրանց միջինը: Կրծի փաթը չափելիս, ժապավենը պետք է անցնի թիակների հետևով և սերտորեն ընդգրկի կրծքավանդակի շրջագիծը: Իրանի թեք երկարությունը ևս չափում են ժապավենով՝ բազկաթիակային հոդից ուղիղ գծով մինչև կենդանու արտաքին նստաթումբը: Եթե այդ երկու չափումների ցուցանիշները հավասար են, ապա կենդանի զանգվածը բերված աղյուսակում հավասար կլինի կրծի փաթը ցուցանող կողքի ուղղահայաց 2-րդ սյունակի ցուցանիշին: Օրինակ, եթե երնջացուի կրծի փաթը և իրանի թեք երկարությունը կազմել են 158-ական սմ, ապա այդ կենդանու կենդանի զանգվածը, ըստ աղյուսակի, 311 կգ է:

Եթե իրանի թեք երկարության ցուցանիշը կրծի փաթի ցուցանիշից պակաս է, ապա պահանջվում է որոշել տարբերությունը, այնուհետև այն բազմապատկել աղյուսակում տրված 3-րդ սյունակի գործակցով և կենդանի զանգվածը ցուցանող 2-րդ սյունակի թվից պետք է հանել այդ արտադրյալը: Ստացված թիվը կլինի կիլոգրամով արտահայտված կենդանի զանգվածը: Օրինակ, եթե կենդանու կրծի փաթը 162 սմ է, իսկ իրանի թեք երկարությունը 152 սմ, ապա, ըստ աղյուսակում բերված ցուցանիշների, կենդանի զանգվածը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

340-[(162-152)x1.2]=340-12=328կգ:

Իսկ երբ իրանի թեք երկարությունը կրծի փաթից մեծ է լինում, դրանց տարբերության և աղյուսակի 3-րդ սյունակում տրված գործակցի արտադրյալը պետք է ոչ թե հանվի, այլ գումարվի: Օրինակ, եթե կրծի փաթը կազմել է 156 սմ, իսկ իրանի թեք երկարությունը՝ 160 սմ, ապա այդ կենդանու կշիռը կլինի՝

305+[(160-156)x1.1]=309.4կգ:

Ընդհանուր առմամբ, նշված չափումներով որոշված տավարի կենդանի զանգվածի շեղումները կշռումներով որոշված ցուցանիշներից տատանվում են ± 2 տոկոսի սահմաններում: Այդպիսի շեղումները հիմնականում կախված են կենդանու սնվածության աստիճանից, ֆիզիոլոգիական վիճակից և հատկապես՝ կրծի փաթի և իրանի թեք երկարության չափումների որոշման ճշտությունից:

Խ. Սիմոնյան
գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
Վ. Աբրահամյան
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

Ազորդություն
Նոյեմբեր 17 - 25, 2014 թ.
Թիվ 30 (2052)

Համայնքային

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Լոռու մարզի հունաբնակ Կողես և Յաղդան համայնքներում իրականում սակավաթիվ հույներ են բնակվում: Խառն ամուսնությունների արդյունքում, հունական ազգանվամբ բնակիչներն աստիճանաբար պակասում են: Հատկապես 1990-ականներին արտագաղթն այս գյուղերից հսկայական չափերի էր հասել: Ազգությամբ հույները հիմնականում մեկնում էին Հունաստան, սակավ դեպքերում՝ նաև նախկին Խորհրդային Միության տարբեր երկրներ: Այժմ Կողեսում և Յաղդանում բնակվող, հունական ազգանուն կրող, հունական ավանդույթներն ու սովորույթները պատշաճ կերպով պահպանող հույները ներկայումս բավականին տարեց են: Նոյեմբերի 18-ին ՀՀ կառավարության աշխատակազմի Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի և Լոռու մարզպետարանի տեղեկատվության ու հասարակայնության հետ կապերի բաժինների ներկայացուցիչները եղան վերոնշյալ համայնքներում՝ տեղում ծանոթանալու ազգային փոքրամասնությունների խնդիրներին:

Կողես համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը տեղեկացրեց, որ համայնքի 300 բնակիչների միայն 10 տոկոսն է հույն: Դպրոցն ունի ընդամենը 27 աշակերտ, որոնց թվում հունական ազգանվամբ երեխաներ չեն սովորում: Այնուամենայնիվ, դպրոցի՝ ազգությամբ հույն ուսուցիչների ջանքերով և Հայաստանում Հունաստանի դեսպանատան աջակցությամբ, Կողեսում և Ստեփանավանում շաբաթօրյա ու կիրակնօրյա հունական դպրոցներ են գործում: Ուսուցիչների վստահեցմամբ, հունարեն լեզվի ուսուցման պարապմունքներին սիրով մասնակցում են նաև հայերը: Սակայն, մտահոգիչ է, որ հունաբնակների ազգային ավանդույթների պահպանմանն ուղղված միջոցառումներ չեն անցկացվում, կրոնական ծեսեր գրեթե չեն կատարվում: Համայնքում չկա հոգևոր կենտրոն, հին եկեղեցին խորհրդային տարիներին ավերվել է, հոգևոր սպասավորներ չեն այցելում: Այնուամենայնիվ, երկու համայնքների համար

թիվ մեկ խնդիրը՝ Ագարակից դեպի Յաղդան ու Կողես տանող ճանապարհահատվածի բարեկարգումն է, որը, մեղմ ասած, անբարեկարգ վիճակում է: Կողեսի գյուղապետը վստահ է, որ եթե ճանապարհը բարեկարգ լիներ, 7-8 տարի առաջ միանգամից 100 բնակիչ չէր լքի հայրենի գյուղը, դպրոցում աշակերտների թիվը չէր նվազի, քանի որ գյուղում զբաղվածության ու ապրուստի խնդիր գրեթե չկա: Արայիկ Ներսիսյանի ջանքերի շնորհիվ, մշակվում է գյուղական նշանակության հողատարածքների 90-95 տոկոսը: ՀՀ կառավարության աջակցությամբ, Լոռու մարզպետարանի կողմից իրականացվող հրատապ ծրագրերով տեղադրվել են հակակարկտային կայաններ, համայնքը գազիֆիկացվել է, համայնքային միջոցներով վերանորոգվել է ակումբը, գյուղապետարանը, տարիներ առաջ Սոցներդրումների հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվել է դպրոցը և այլն:

- Գյուղը լքեցին հիմնականում երիտասարդ ընտանիքները, քանի որ՝ ճանապարհի անբարեկարգ լինելու պատճառով, հրատապ դեպքերում դժվար էր լինում քաղաք հասնել,- ասում է Ա. Ներսիսյանը: Այս տարի առաջին դասարան չեն ունեցել: Այս ամենով հանդերձ՝ Կողեսում բնակվող թե՛ հույները, և թե՛ հայերը, ովքեր ազգային հարցերի շուրջ երբևէ ընդհարումներ ու տարաձայնություններ չեն ունեցել, լիահույս են, որ մոտ ապագայում ամեն-ինչ լավ է լինելու, առավել ևս, որ հաջորդ տարի նախատեսվում է՝ Համաշխարհային բանկի միջոցներով, սկսել ճանապարհի բարեկարգման աշխատանքները:

Յաղդանում ևս զբաղվածության խնդիր գրեթե չկա, գյուղական նշանակության հողատարածքների մեծ մասը մշակվում է: Պետական աջակցությամբ բարեկարգման ու հիմանորոգման բազմաթիվ աշխատանքներ կատարվել են հրատապ ծրագրերով և մասնավոր ներդրումներով: Այս համայնքի համար ևս առաջնայինը ճանապարհի բարեկարգումն է: Ինչպես վկայում է համայնքի ղեկավար Արամ Ջանջուղազյանը, հիմնական արտագաղթը եղել է 1992-1993 թթ.-ին, երբ միանգամից 600-700 բնակիչ արտագաղթել է Հունաստան, Ռուսատանի Դաշնություն, նախկին Խորհրդային Միության այլ երկրներ: Հետագա տարիներին երեք հույն ընտանիք վերադարձել է հայրենի գյուղ՝ չկարողանալով հարմարվել նոր պայմաններին: Գյուղի 230 բնակչից ազգությամբ 25-ը հույն են: Հունազգի ընդամենը երկու երիտասարդ ընտանիք կա, մյուսները հիմնականում տարեցներ են, ովքեր իրենց իսկական հայրենիքը Հայաստանն են համարում և ոչ մի դեպքում չեն պատրաստվում լքել գյուղը, թեև նրանց թվում կան այնպիսիները, որոնց զավակներն արդեն շուրջ 20 տարի Հունաստանում են բնակվում: Ուրախալի է, որ գյուղապետի ջանքերով 3 երիտասարդ ընտանիք վերաբնակեցվել է Յաղդանում, որոնցից յուրաքանչյուրն ունի 3-ական երեխա: Ընտանիքներն ապահովվել են բնակարանով, աշխատանքով: Արամ Ջանջուղազյանը գյուղի ամենամեծ ձեռքբերումը համարում է այն, որ այս տարի 7 ծնունդ է գրանցվել: Նա լիահույս է, որ ծնունդների թիվը տարեցտարի կավելանա: Հունական ավանդույթների պահպանման նպատակով այստեղ ևս էական քայլեր չեն իրականացվում, միայն դպրոցական միջոցառումների ժամանակ երբեմն հունական պար է մատուցվում, երբեմն էլ՝ կրոնական միջոցառումներ են իրականացվում: Օրինակ, նախորդ տարի հունական ավանդույթներին համապատասխան, մեծ շուքով նշվել է Սուրբ Ջատիկը:

Ներկայացված խնդիրներն ամփոփվել են կառավարության և մարզպետարանի ներկայացուցիչների կողմից և առաջիկայում քննարկման առարկա կդառնան:

Դիմանկար

Բույսերի աշխարհում

Աստղիկ Մարությանն ապրում է Տավուշի մարզի Բերդ քաղաքում: Մասնագիտությամբ մանկավարժ է, կենսաբանության ուսուցչուհի է դպրոցում: Երկար տարիներ է, ինչ սիրած գործով է զբաղվում: Այժմ ընդգրկված է «Էկո Բերդ» կանանց խմբում: Խմբի բոլոր կանայք կենսաբանության մասնագետներ են: Տիկին Աստղիկը մանկավարժությամբ զբաղվում է շուրջ 42 տարի, պատմում է, որ բազմիցս մասնակցել է «Կանաչ արահետ» ՀԿ-ի կազմակերպած միջոցառումներին, սեմինարներին, խորհրդակցություններին: Ձեռք բերած համապատասխան որակավորման շնորհիվ էլ մարզի տարբեր դպրոցներում և կրթական հաստատություններում, «Էկո Բերդի» կանանց խմբի հետ միասին ուսուցանել է, թե ինչպես պետք է ընտրել էկոլոգիապես առողջ սնունդ, ինչպես առանց քիմիական պարարտանյութեր օգտագործելու, մշակել օրգանիկ մթերք, այսինքն՝ վերապատրաստվելուց հետո սովորածն ու կիրառածը տարածել այլ համայնքներում: Ըստ տիկին Աստղիկի, «Առողջ սնունդ՝ առողջ սերունդ ունենալու համար» կարգախոսն օգնում է, որ աշխատանքը նպատակային լինի:

Կենսաբանության ուսուցչուհին ժպիտով է խոսում երազանքների մասին... Ո՞ր կինն է հեռու երազելուց: Շատ է ուզում, որ յուրաքանչյուրն ապրի անհոգ, որ ոչ մեկի դեմքին չդրոշմվի ամեն օրվա հոգսն ու ցավը: Իսկ երբ կենսաթոշակի գնա, ցանկանում է փոքր հողակտոր ունենալ ու զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով: Մտածում է, կարևորը՝ բարություն անելն է, հավատում է՝ բարությունը կփրկի աշխարհը:

Մասնագիտությունը հնարավորություն է տվել տիկին Աստղիկին, որ միշտ կապվի գյուղի և գյուղատնտեսության հետ: Նա կարծում է, որ նրանք, ովքեր զբաղվում են գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ, պետք է գիտակցեն, որ մեր օրերում օրգանիկ սնունդն, իրոք, ժամանակի պահանջ է: Այդ առումով, պետք է ընդլայնել սեփական փորձի տարածումը: Նա կանանց խմբի հետ միասին զբաղվում է բազմատեսակ բույսերի աճեցմամբ, հատկապես հատապտուղների՝ դրանցից պատրաստելով մուրաբաներ, կոմպոտներ: Կարծում է, որ մաքուր և առողջ սննդի արտադրությունն իրենց կենտրոնի անկյունաքարն է դարձել:

Վերջերս կազմակերպված՝ «Գյուղական կյանքի և ավանդույթների փառատոնին» «Էկո Բերդ» կանանց խումբը սեղանը զարդարել էր հատապտուղներով՝ ծորենիով, տանձով, մամուխով, սև սալորաչրով: Իսկ տնային պայմաններում նրանց պատրաստած մուրաբաներն իրենց պատրաստման եղանակներով մեծ հետաքրքրություն առաջացրեցին հյուրերի մոտ: Խումբը զբաղվում է նաև բնության պահպանությամբ: Նախ՝ աղբի վերամշակում, իսկ հետո՝ երեխաների հետ միասին, թափոններից հետաքրքիր և կիրառելի իրեր են պատրաստում, որոնք օգտագործվում են մեր առօրյայում:

Լիանա Շախնազարյան

ՎԵՀԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄ

Վերջերս Արգենտինայի Մենդոսա քաղաքում տեղի ունեցավ Գինու և խաղողի միջազգային կազմակերպության 12-րդ գլխավոր վեհաժողովի նիստը:

Չնայած Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի և Արգենտինայում Ադրբեջանի դեսպանի կողմից կազմակերպությանը Հայաստանի անդամակցությունը խոչընդոտելու ուղղությամբ ներդրած ջանքերին՝ նիստի ընթացքում Հայաստանը հանդիսավոր արարողությամբ հայտարարվեց Գինու և խաղողի միջազգային կազմակերպության լիիրավ անդամ:

Իր խոսքում Արգենտինայում ՀՀ դեսպանության ներկայացուցիչը գոհունակություն հայտնեց կազմակերպությանը՝ Հայաստանի անդամակցության կապակցությամբ, նաև անդրադարձավ Հայաստանի գինեգործության հազարամյա ավանդույթներին և Հայաստանում առկա գինեգործության համաշխարհային պատմության եզակի հուշարձաններին:

ՀՀ Արտաքին գործերի նախարարություն

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ԱՄԵՆ ԻՆՉ ՀՆԴԿԱՃԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Հնդկաձավարն ամբողջ աշխարհում սննդամթերքի ամենաօգտակար տեսակներից մեկն է համարվում: Փորձենք պարզել, արդյո՞ք այն այդչափ օգտակար է:

Պարզվում է՝ հնդկաձավարը վիտամինների և օգտակար միկրոտարրերի հարուստ պաշար է առաջարկում: Նախևառաջ հարկ է նշել, որ այն արյունատար անոթներն ամրապնդելու և դրանց ճկունությունը պահպանելու հատկությամբ աչքի ընկնող P վիտամինի (ռուտին) բաղադրություն ունի: Հնդկաձավարում առկա են PP խմբի վիտամիններ, ինչպես նաև նշանակալի դերակատարում ունեցող՝ լիմոնաթթու, թրթնջկաթթու, խնձորաթթու և մալեինաթթու:

Հնդկաձավարը հարուստ է նաև երկաթի բաղադրությամբ, ուստի սակավարյունությամբ տառապող մարդկանց խորհուրդ է տրվում սննդամթերքի այս տեսակն անպայման ներառել սննդակարգի մեջ: Բաղադրիչներից մեկն էլ՝ ֆոլիաթթուն է, որն իմունային և արյունաստեղծ համակարգերի համար կարևոր է:

Նիհարելու ցանկություն ունեցող մարդիկ հաճախ են տարատեսակ հնդկաձավարային սննդակարգեր կիրառում: Պարզվում է՝ բավականին բարձր կալորիականություն ունենալով հանդերձ, հնդկաձավարն, իսկապես, կիսահագեցած ճարպերի հաշվին, կարող է խոլեստերինի մակարդակի նվազեցմանն ու նյութափոխանակության արագացմանը հանգեցնող և ավելորդ քաշից ազատվելու միջոց ծառայել:

Միայն թե հիշեք՝ այն չի կարելի օգտագործել կաթի հետ միասին, քանի որ դժվարամարսելի է: Հնդկաձավարը կարելի է նաև բուսական յուղի կամ բանջարեղենի հետ համադրել. չէ՞ որ և՛ հնդկաձավարը, և՛ բանջարեղենը կոպիտ բջջանյութեր են պարունակում, որոնց միաժամանակյա օգտագործումը կբարելավի աղիների աշխատանքը:

Հնդկաձավարը չի կարող լուրջ վնաս հասցնել մարդու օրգանիզմին, եթե, իհարկե, խոսքը չարաշահման մասին չէ: Չափից շատ հնդկաձավար, ինչպես և սննդամթերքի ցանկացած այլ տեսակ ընդունելու պարագայում, ստամոքսի սպազմ և փքվածություն կարող է ի հայտ գալ:

Այդուհանդերձ, քրոնիկ երիկամային անբավարարություն ունեցող դիաբետիկներին խորհուրդ է տրվում մի փոքր ավելի զգուշություն դրսևորել հնդկաձավարի նկատմամբ: Մնացած բոլոր դեպքերում այն հակացուցված չէ:

Հարկ է նաև նշել, որ որոշ մարդկանց մոտ հնկաձավարի նկատմամբ ինքնատիպ ալերգիա կարող է ի հայտ գալ: Նման դեպքերում, բնականաբար, սննդամթերքի տվյալ տեսակն օգտագործել չի կարելի:

ՄԱՂԱԴԱՆՈՍԸ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՐ

Մաղադանոսը հովանոցազգիների ընտանիքին պատկանող երկամյա, բուրավետ խոտաբույս է: Արմատը հյութալի է, իլիկաձև, ճյուղավորված: Բույսը կյանքի առաջին տարում առաջացնում է երկարակոթուն, կրկնակի փետրաձև տերևների վարդակ: Երկրորդ տարում աճում են կլորավուն, խիտ ճյուղավորվող ցողուններ՝ մինչև 50 սմ բարձրությամբ: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, հովանոցաձև ծաղկաբույլը կազմված է մանր, սպիտակ ծաղիկներից: Պտուղը պարունակում է երկու մոխրականաչավուն, դառնահամ սերմիկ: Ըստ ավանդազրույցի՝ բույսն առաջին անգամ հայտնաբերվել է Պելոպոնես թերակղզու քարքարոտ լեռներում, անվանվել և «լեռնային նեխուր»

Մաղադանոսը, նույն ինքը՝ կարոսը, պարունակում է մի քանի անգամ շատ ասկորբինաթթու, քան՝ կիտրոնը. մեկ փոքրիկ փունջը կբավարարի օրգանիզմի մեկ օրվա պահանջարկը: Բույսի բոլոր մասերը (ավելի շատ՝ սերմերը) պարունակում են բուրավետ յուղ, B_1, B_2, K վիտամիններ, կարոտին, նիացին, ֆոլիաթթու, նաև ֆիտոնցիդներ: Արմատները պարունակում են զգալի քանակությամբ կալիում, կալցիում, ֆոսֆոր, մագնիում, երկաթ, պղինձ, մարգանեց, կոբալտ, ցինկ, նիկել, քրոմ, յոդ, սելեն, ինչպես նաև սպիտակուցներ, ածխաջրատներ, պեկտին: Սերմը պարունակում է 7 տոկոս եթերայուղ, 22 տոկոս ճարպայուղ, ֆլավոններ, գլիկոզիդ:

Հնագույն ժամանակներում մաղադանոսը մշակվել է՝ որպես դեղաբույս: Հին Հունաստանում համարվել է փառքի խորհրդանիշ: Մաղադանոսը՝ որպես դեղաբույս, գրանցված է աշխարհի գրեթե բոլոր երկրների դեղաբանական ցանկերում: Բուժիչ հատկություններ ունեն բույսի արմատը, տերևը և հատկապես՝ սերմը: Բույսից ստացված պատրաստուկներն օգտագործում են որպես ախորժակը և մարսողությունը լավացնող, միզամուղ, թույները հեռացնող, հակաբորբոքային միջոց՝ լյարդի, լեղապարկի, երիկամների, սրտի հիվանդությունների բուժման ընթացքում: Կա կարծիք, որ մաղադանոսի հյութն անհրաժեշտ է թթվածնային փոխանակության, մակերիկամների, վահանագեղձի բնականոն ֆունկցիայի պահպանման և արյունատար մազանոթներն ամրացնելու համար: Ունի ուժեղ ներգործություն միզաքարային հիվանդության, օրգանիզմի ջրազրկման, տեսողական նյարդի հիվանդության, աչքի եղջերաթաղանթի խոցոտման, շաղկապենու բորբոքման, կատարակտի դեպքում և այլն: Հոմեոպատները բույսի հյութից և սերմից ստացված պատրաստուկներով բուժում են ուրոլոգիական հիվանդությունները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 20 դրամ

«Ագրոլրատու»թերթի և
«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արտաշես» կազմակերպությունները:

ՍԿՍՎԵԼ Է 2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 130
ստորագրված է տպագրության 24.11.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա